ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Հ Ր Ա Մ Ա Ն

28 դեկտեմբերի 2013 թվականի N 208-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ “ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ (ՆԵՐԱՌՅԱԼ՝ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՃԵՂՔՎԱԾՔԸ)” ՓԱՍՏԱԹՂԹԻ ՁԵՎԱՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահի 2013 թվականի դեկտեմբերի 19-ի N 194-Ա հրամանով հաստատված հավելվածի 4.2 և 5.6 կետերի կատարումն ապահովելու նպատակով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի համակարգի ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ մատուցող կազմակերպությունների “Ֆինանսական տեղեկատվության շրջանակը” փաստաթղթի ձևաչափը՝ համաձայն կից Հավելվածի:
2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**